

1-И ЭКЗ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ		SOMMAIRE	
1943	ՅՈՒՆՈՒԱՐ - ՅՈՒՆԻՍ ԹԻՒ 1-6	1943	Janvier - Juin N. 1-6
	Էջ		PAG.
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ			
Հ. Մեսրոպ ձանաշեան. — «Բազմավէպ»ի առաջին դարադարձը 1843 — 1943 . . .	1	P. Mesrob Djanachian. — Le premier Centenaire de la Revue «Pazmaveb» 1843-1943 .	1
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ			
Հ. Ղեւոնդ Տաշեան. — Պատասխան եր. Տէր Կոմիտաս Վկայի «Կարծեցեալ» մարմնոյ մասին (շար.).	8	PHILOLOGIE	
Հ. Վարդան Հացունի. — Ս. Գրիգոր Լուսաւորիչ Ս. Ստեփանի մէջ	35	P. L. Dayan. — La question des reliques «attribuées» au bienheureux Gomidas: (Réponse à Mgr. Jean Nazlian), suite	8
ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ			
Ճեվահիրճեան Ս. — Սիւնազարդ ծածկոցի զրուծիւնը եւ կամարակապ զարդասիւները հայկ. ճարտարապետութեան մէջ	17	P. Vardan Hatzouni. — St. Grégoire Illuminateur dans l'Eglise de Ste. Sophie	35
ԳՐԱԿԱՆ			
Բաքիւնի ձիովանցի. — Սիւնն Կիւրեանցի (թրգմ. իտալերէնէ)	25	BEAUX — ARTS	
Հ. Մեսրոպ ձանաշեան. — Ճաշակ «Բուրաստան»էն (թրգմ. աշխարհարար)	32	Djévahirdjian S. — Le système des arcades et des portiques dans l'architecture arménienne (suite)	17
Հ. Արմաւիրեան. — Երեկոյեան զգայնութիւններ (քերթում)	34	LITTERATURE	
Հ. Ճ. — Շէյքսպիրի հայերէն թարգմանութիւնները եւ նոր փորձի մը փոքրիկ նմոյշը	41	Papini Giovanni. — Le Cyrène (trad. de l'italien)	25
		P. Mesrob Djanachian. — Essai de la poésie didactique «Pourastank» de Mgr. Ed. Hurmuz (trad. en arm. moderne)	32
		P. Armavirian. — Sensations du soir (poésie)	34
		P. M. Dj. — Les versions arméniennes de Shakspeare et une epreuve d'une nouvelle tradition	41

Հ. ՅՈՎՀԱՆՆԵՍ Վ. ԹՈՐՈՍԵԱՆ

ԸՆՏԻՐ ՀԱՅԿԱԶՈՒՆՔ

Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ջ Ա Ր Գ

ԶՈՐՐՈՐԿ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՍՐԲԱԳՐՈՒՄ ԵՒ ՓՈՓՈԽՈՒՄ

Գինն է 3,15 Զուից. Ֆր.

1843-1943

Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՅՈՒՆՈՒԱՐ - ՅՈՒՆԻՍ ԹԻՒ 1-6

ՀԱՏ. ՃԱ. ՌԵՂԲ.ՌԵՂԳ.

ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ

ԱՌԱՋԻՆ ԴԱՐԱԴԱՐՁԸ

1843-1943

Այսօր մշակութային պատմութեան մէջ զրական յորեկանները կը կազմեն այն մեծ եւ կարեւոր հանգրուանները, որոնց վրայ կանգ առած հսկայ բազմութիւն մը մտաւորականներու եւ զրասէր հասարակութեան՝ հիացմունքի եւ յարգանքի զգացումով կը դիտեն անցեալ քսան, քառասուն եւ հազուադիւսորէն յիսուն տարիներու փառահեղ շրջանը՝ անհատի կամ ընկերութեան մը գործունէութեան։

Գրական այսպիսի յորեկաններ յաճախ տօնախմբուած են ոչ միայն եւրոպական կեդրոններու՝ այլ նաեւ մեր մէջ։ Կարեւոր են ատոնք զրդիւ եւ քաջալերութիւն առաջ բերելու համար, ու սորվեցնելու միանգամայն թէ ինչպէս՝ իմաստուն եւ լուսամիտ անձնաւորութիւններ կամ խմբակներ կամքի կրանիդեայ տոկունութեամբ, յաղթելով նոյնիսկ արտակարգ դժուարութիւններու, կարող եղած են նպաստելու մարդկային եւ կամ, աւելի չափաւոր սահմանի մը մէջ, աղգային քաղաքակրթութեան յառաջադիմութեանը։ Այդ առիթները օգտակար են տօնախմբող ժողովուրդներու համար մանաւանդ, վասն զի անկէ հանուած չահեկան դասէն, անդրադարձութենէն եւ կատարուած դիտողութիւններէն դուրս՝ զարգացումի նոր փուլի մը մէջ թեւակոխելու քաջութիւնն ու ոյժը կը ներշնչեն անոր։

Միւլթարեան Միաբանութեան կեանքին մէջ շատ անգամ տօնուած են զրական յորեկաններ իր բազմաբղիւն գրադէտ դէմքերուն, զրական ձեռնարկներուն, թերթերուն եւ հրատարակութիւններուն, ու վերջերս դեռ 1936ին, դար մը առաջ հիմնուած իր Մ. եւ Ռ. Վարժարաններու միջոցաւ կատարած դաստիարակչական գործունէութեան հարիւրամեակը։